ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՌՈՒՏՈԼՖ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՀԵՏ

—Պարոն Խաչատրեան, մենք կ'ուզենք մեր հարցազրոյցը սկսիլ ձեր նկարչական կազմաւորման մասին կարգ մը տեղեկութիւններ բաղելով: Դուք ու՞ր ուսած էք, ինչ՞ է ձեր պատրաստութիւնը եւ ինչ՞ եղած է Երուանդ Քոչարի դերը ձեր արուեստի զարգացման մէջ:

—Ինձ թուում է, որ սովորաբար պատահականութիւններ չեն լինում, կան օրինաչափութիւններ: Տասներեք-տասներորդ տարեկան հասակում ես սովորեցի Երեւանի նկարչական ուսումնարանում: Յետոյ ես դուրս եկայ այդ ուսումնարանից եւ պատահմամբ հանդիպեցի Երուանդ Քոչարին, որին բոլորը մաեստրո էին կանչում: Նա մի հաղուագիւտ երեւոյթ էր Հայաստանի եւ ընդհանրապէս արուեստի գիտակներին, արուեստի մասին մտածողներին չրջանակում Քոչարը երկար տարիներ ապրել է Փարիզում, ճաշակել էր ամբողջ համաշխարհային մշակոյթը, խորապէս ըմբռնել, եւ ժամանակակից արուեստի պատմութեան մէջ ստեղծել էր նոր ուղղութիւն, Ֆրանսերէն կ'ասեն «բենթիւր տան լեսրաս»: Հիմնադիրն էր այդ ուղղութեան:

Երեսունչորսից տարեկան հասակում Փարիզից երիտասարդ մաեստրոն վերադառնում է Հայաստան, շարունակելու իր արուեստը հայրենի հողի վրայ: Բոլորին յայտնի է Սասունցի Դաւիթի հոյակապ կոթողը, որ զարդարում է մեր Երեւանի կայարանի հրապարակը: Քոչարը թայլոյ հանրագիտարան էր, ամէն ինչից տեղեակ՝ եւ փիլիսոփայութիւն եւ գրականութիւն: Տասներինգ տարեկան հասակից մինչեւ երեսուներեք տարեկան հասակ գրեթէ ամէն օր մենք հանդիպել ենք, գրուցել, միշտ ցոյց եմ տուել իմ նկարները: Ամէն օր նոր աշխատանք կը տանէի Քոչարին ցոյց տալու, կամ ես կ'երթայի իրեն մօտ կամ ինքը կու գար ինձ մօտ: Այդ չփումն է, որ ինձ տուեց այս մեծ սէրն ու մտքումը արուեստի բնագաւառում: Շփում որ շատ կարեւոր է արուեստագէտի համար:

Նկարչութիւնը իմ կարծիքով չեն սովորեցներ, այլ պէտք է վարակել նկարչական արուեստի սիրով վարակել աշխատասիրութեամբ, հասկանալ բուն նպատակը արուեստի, իսկ ամենակարեւորը արուեստագէտների չփումն է մեծ արուեստագէտների հետ:

—Ուրեմն ակադեմական մասնաւոր պատրաստութիւն չստացաք:

—Ո՛չ, դա արդէն ինձ պէտք չէր, որովհետեւ տասներեքհինգ տարեկան հասակում, թայլ տուէք ասել, ես պատրաստ էի, այդ ճանապարհներն անցած էի ինքնուրոյն կերպով:

—Ուրեմն հիմնականին մէջ Քոչարի եւ միւս մեծ արուեստագէտներու հետ ձեր ունեցած շփումներու շնորհիւ է որ կարողացաք ձեր նկարչական անհատականութիւնը կազմաւորել:

—Այո՛, որովհետեւ անհատականութիւն կազմաւորելը միայն նկարելու մէջ չէ, այլ պէտք է անպայման հասկանալ նկարչական արուեստի ամբողջ պատմութիւնը, ժամանակակից արուեստը, ինչ որ անհրաժեշտ պայման է ամէն արուեստագէտի համար, անկախ այն բանից թէ տուեալ արուեստագէտը աբստրակտ արուեստի հետեւող է, թէ դասական, անհրաժեշտ է, որ ամէն ինչից տեղեակ լինի: Սրանից յետոյ, արուեստագէտն ինչ որ ունի ներսում, տաղանդի ու շնորհքի առկայութեան դէպքում իր խօսքն անպայման կ'ասի:

—Կ'ուզեմ ձեզի հարցում մը ուղղել Հայաստանի նկարիչների մասին: Քանի՞ նկարիչներ կան այսօր Հայաստանի մէջ, ի՞նչ դպրոցներու կը հետեւին, ո՞րքանով հաղորդակից են աշխարհի նկարչական շարժումներուն, որո՞նք են այդ նկարիչներուն մէջ ամենէն շնորհալիներն ու ճանաչուածները:

—Հայաստանում այսօր մօտ ութը հարիւր (800) նկարիչ կայ **professional**: *Սա բաւականին շատ է Հայաստանի համար: Կան նաեւ ոչ* **professional**-*ներ, թիւով բաւականին շատ: Ընդհանրապէս հայ ժողովուրդը շատ մեծ դեր է ունեցել եւ կ'ունենայ մշակոյթի ասպարէզում: Կան շատ տաղանդաւոր նկարիչներ, երիտասարդ արուեստագէտներ, ճանաչում են համաշխարհային նկարչութեան անցեալն ու ներկան: Տեղեկութիւն միշտ կայ Հայաստանում եւ ամէն ինչ գրեթէ գիտեն հայ արուեստագէտները, քանի որ քսաներորդ դարը այնպիսի դար է որ ամէն մի կատարուած նորութիւն տեղ է հասնում: Արուեստի մասին ամսագրեր կը տպուեն, այնպէս որ ամէն ինչից տեղեակ են: Բայց իհարկէ իմանալը միայն կարեւոր չէ, այլեւ չփումը:*

Տաղանդաւոր արուեստագէտներէն շատ կը սիրեմ ու կը հաւնիմ Ռուբէն Ադալեանին, Մարտին Պետրոսեանին, Էլիրեկեան եղբայրներին: Շնորհալի քանդակագործներ շատ կան, ինչպէս Արա Շիրուզը, Օհան Պետրոսեանը եւ շատ ու շատ ուրիշներ: Սրանք իմ սիրածներն են, իմ ընկերները, որոնց յաճախ կը հանդիպեմ, կը վիճենք, կը խօսենք: Պէտք է նրանց անհատական ցուցահանդէսներն էլ լինեն եւ Ամերիկայում եւ ուրիշ երկիրներում:

Իրար նման չեն մեր նկարիչները, ամէն մէկն ունի իր անհատականութիւնն ու սեփական խօսքը:

— Ի՞նչ է ձեր գաղափարը վերացական արուեստի մասին:

— Ես այն կը համարեմ մի ընդունելի ձեւ որն իր կեանքն ապրել է արդէն: Այսօր ինձ համար ծիծաղելի է վերացական արուեստով զբաղուելը: Ես նրանց ուշացած մարդիկ կը նկատեմ:

— Ուրեմն կը կարծէք, որ նոր դասականութեան միտում մը կա՞յ:

— Այո՛, բսաներորդ դարի վերջը, վերջնահատուածը դասական արուեստի ձգտումին է գնում որովհետեւ իմ կարծիքով նոր ասելիք չմնաց, ամէն ինչ փորձեցին վերջնացաւ (ձեւի առումով): Դրա համար բուն կերպով դէպի անցեալը կը գնանք նոր խօսքով: Երբ հնագոյն արուեստն ստեղծուեց յանձինս արձանագործութեան, տասներեքթ դար էր պէտք որ նոյն գաղափարները վերածնունդի ժամանակ վերակենդանանային գեղանկարչութեան մէջ:

— Ըստ ձեզի նուաճուած են մարդկային մտածողութեան սահմանները արուեստի մէջ, որպէսզի պահանջը զգացուի նոր դասականութեան:

— Այո՛, նոր դասականութիւնը ես կը գտնեմ որ միմիայն գծանկարչութեան մէջ կը կայանայ, որովհետեւ եթէ գեղանկարչութեան մէջ լինի, դա կը լինի կրկնութիւն, դասական, վերածնունդ արուեստին: Նոր հնարաւորութիւն պիտի ստեղծես: Ես ստեղծել եմ այդ հնարաւորութիւնը՝ Լեւկասը եւ Մեպիան: Այս համադրութեամբ կարելի է նոր դասական, բարձր արուեստ ստեղծել, բայց նորից եմ կրկնում, գեղանկարչութեան մէջ չի լինի:

— Լեւկասն ու գծանկարը սահմանափակ չե՞ն, կ'ուտա՞ն արուեստի ամբողջականութեան զգացումը լիովին կերպով:

— Այո՛, ոչ թէ կու տան, այլ տեսէք նկարները լիովին տալիս են այդ բոլոր հնարաւորութիւնները:

— Ես կ'ուզեմ վերադառնալ լոյսի գաղափարին: Ձեր կենսագրութեան մէջ պատմութիւն մը կայ, որքան առասպել է, որքան ճիշդ, չեմ գիտեր: Ձեր փոքր տարիքին տեսիլք մը տեսած էք, լոյսի շողարձակումը եւ ձեր ամբողջ կեանքը այդ լոյսի փնտռտուքին նուիրուած է: Կ'ուզէիք անդրադառնալ թէ ատիկա որքա՞ն իրական է:

—Դա իրական պատմութիւն է, բայց չէի ուզենայ դրա վրայ ծանրանալ, բայց եղել է այդ տեսիլքը, երեք անգամ, նոյն օրը, գիշերով, խաւարի մէջ: Տասներեք տարեկան էի այն ժամանակ եւ կը կարծեմ, որ այդ լոյսն է որ կը փնտռեմ ամէն մի գործի, նկարի մէջ: Նշանակութիւն չունի՝ մարդ է այն, բնանկար, թէ բնութեան տեսարան: Միշտ այդ լոյսը կ'ուզենամ տեսնել: Սա երեւի առաքելութիւն (mission) է, որ տրուած է:

—Ձեր արուեստով կրցա՞ծ էք այդ լոյսը գտնել, թէ տակաւին ոչ:

—Ես ոչ թէ կը փնտռեմ, այլ կը ձգտեմ էլ աւելի այդ լոյսն արտայայտել: Արդէն բաւականին արուած է: Սա այնպիսի բան չէ, որ նստես ու փնտռես, դա սէ՛ր է, լոյս, որ մարդու մէջ պէտք է լինի միաժամանակ: Լոյսը բարին է, բարի ու գեղեցիկ սէրը, մարդու մէջ պէտք է ըլլայ ամէն օր, ամէն ժամ, որպէսզի կարողանայ տեսնել աշխարհը բարութեան աչքերով, որ նկարներն էլ չաղախուեն այդ լոյսով:

ՇԻԿԱՀԵՐ ԿԻՆԸ

ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ

—Կ'ուզեմք մեր զրոյցը շեղել նաեւ ամերիկեան արուեստի մասին: Դուք հիմա Ամերիկա էք եւ վստահաբար ամերիկեան արուեստին ծանօթութիւն ունիք: Ի՞նչ են յատկանիշները ամերիկեան արուեստին: Ի՞նչը կը սիրէք եւ ի՞նչը չէք սիրեր:

—Ես ամերիկեան արուեստին ծանօթ եմ տակաւին Երեւանից: Գիտէ՞ք ինչ, Ամերիկան երիտասարդ երկիր է դեռ, աւանդոյթներ չունեցող երկիր: Երբ կը նայեմ սկզբնական շրջանի ամերիկեան նկարչութիւնը, այսպէս ասած ոչ թէ դասական է, այլ տասնութերորդ-տասնիններորդ դարի նկարչութիւն, յաւ թէ վատ այդպիսին է: Ժամանակակից արուեստը իհարկէ Ամերիկա ներխուժեց Եւրոպայից: Իմ կարծիքով ամերիկեան արուեստի մէջ ամէն ինչ կայ, բացի հոգեւոր արուեստից: Ոգու գաղափարը, ոգին չկայ: Բայց ոգին է, որ ստեղծում է որակը, դրա համար էլ որակն էլ այն չէ: Կարծես մանրագնին ամէն ինչ նկարուած է, բայց դա նկարուած չէ ոգու համար, այլ միայն աչքի համար է նկարուած: Բայց այլ է վերածնունդի նկարիչների գործերը, ամէն ինչ նկարուած է մանրակրկիտ, բայց եւ կա՛յ ոգին, որն ինձ համար ընդունելի է: Պատահական չէ, որ ԱՄՆ-ում **hyper realism** *առաջացաւ: Սա աւելի ֆոթո, լուսանկարչային արուեստ է, ֆոթո մտածելակերպ: Նոյնիսկ վերցնում են լուսանկարը, մեծացնում եւ նկարում լուսանկարից: Սա իրական աշխարհին ձգտելու նշան է, լաւ է դա, բայց քիչ է, ոգին պակաս է: Դա գալիս է աւանդոյթների պակասից արուեստի մէջ, իսկ մենք ինչպէ՞ս կարող ենք անոգի լինել, երբ ունենք հսկայական դարերի պատմութիւն: Մեր անցեալի պատմութիւնն էլ ոգով է ստեղծուած, ոգու ուժով, յետոյ նոր գիտակցական շարադրանքն է եկեք: Ոգին է եղել առաջնակարգը:*

Ինձ մօտ եղել են շատ ամերիկեան նկարիչներ, որոնց շատ են դուր եկել իմ աշխատանքները, ցանկութիւն են յայտնել, որ այս երկրի մէջ ցուցահանդէս ունենամ: Ես նկարել եմ ամերիկեան դեսպանատան շատ աշխատաւորների: Ընդհանրապէս Մոսկուայի դեսպանատան աշխատողները շատ են հետաքրքրում մեր արուեստով, կը սիրեն մեր արուեստը:

—Մոսկուայի մէջ դուք արուեստի շրջանակ ունի՞ք, ձեր արուեստի ուրոյն շրջանակը եւ հայեր կա՞ն այդ շրջանակին մէջ:

—Շատ յայտնի արուեստագէտներ կան Մոսկուայում, ինչպէս քանդակագործ Նիկոլոյ Նիկոլոսեանը՝ ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ արձանագործ եւ ուրիշ երիտասարդ արուեստագէտներ: Բայց գիտէ՞ք ինչ, արուեստագէտները ընդհանրապէս մենակ են, նրանք իրենց մենակութիւնը սիրում են, որովհետեւ մենակութեամբ կը ստեղծեն արուեստ: Շատ չփում հնարաւոր չէ, ժամանակի կորուստ է: Արդէն տասը օր է, որ այստեղ եմ, բայց շատ եմ նեղւում, որովհետեւ գրեթէ չեմ նկարում, սիրտս է նեղւում: Ես սովոր եմ օրական տաս-տասներկու ժամ աշխատելու:

—Հիմա դուք ձեր արուեստի փնտռտուքներու մէջ հասած էք հանգրուանի մը եւ այդ հանգրուանը ձեզի լիութիւն կու տայ, ո՞ւր կը ձգտիք երթալ:

—Շարունակել այն ինչ որ ստեղծել եմ, շարունակել առաւելապէս ոգին եւ որակը, աւելացնելու համար: Արուեստը փնտռել չէ, այլ, կ'լ աւելի տալ է, ընդունակ լինել սիրելու: Ինձ համար ամենամեծ արուեստագէտը նա է, ով բոլորից շատ կը սիրի: Ամենաձգուար բանը սիրել է, իսկ որ նկարչութեամբ կարողանաս այդ սիրոյ մասին երգե՛լ...

ABRIL PRINTING
5450 SANTA MONICA BL.
LOS ANGELES, CA 90029

Մասիս ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՕՐԿԱՆ՝ Ս. Դ. ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ՄԱՍԻՍ, Ե. ՏԱՐԻ, ԹԻՒ 41, ՇԱԲԱԹ, ՆՈՅ. 9, 1985
VOLUME 5, No. 41, SATURDAY, NOV. 9, 1985

MASSIS WEEKLY
1060 N. ALLEN AVE. SUITE 101
PASADENA, CA. 91104

Քաղաքական նշմար

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԵՐԶՕՐ ՏԷՐՈՒԹԻՒՆ

Մեծ տէրութիւնները ժամանակի ընթացքին կը զարգացնեն մտածողութեան իւրայատուկ ձեւեր, որոնցմէ ձերբազատուիլը բաւական դժուար կ'ըլլայ։ Առնենք օրինակները Անգլիոյ եւ Ֆրանսայի որոնք տակաւին 20րդ դարու մինչեւ երկրորդ կէսերը աշխարհակալ եւ գաղութարար տէրութիւններ եղած էին։ Անգլիան մինչեւ այսօր, հակառակ իր ոյժին եւ ազդեցութեան լուրջ նուազումին, եւ հակառակ իր ներքին կացութեան մտահոգիչ հանգամանքին, տակաւին կը մտածէ եւ յաճախ ալ կը գործէ, ինչպէս պատահեցաւ Ֆոլքլէնտ կղզիներու համար Արժանթինի հետ մղած փոքր պատերազմին ընթացքին, այնպէս թէ ոչինչ փոխուած է իրեն համար, աշխարհի ոյժերու դասաւորումին մէջ։

Ֆրանսայի պարագային, կացութիւնը նոյնն է։ Իր հողամասէն հազարաւոր քիլոմեթրներ անդին, Ֆրանսա տակաւին կը շարունակէ հիւլէական ռումբի իր փորձերը, ինքզինք նեղ կացութիւններու մատնելու գնով, ինչպէս եղաւ «Ռենպօ Ուորրիըր» նաւի ականահարման պարագային, որ մինչեւ այսօր ալ տակաւին լման չէ փարատած։ Հպարտ Ֆրանսան կ'ուզէ ունենալ իր «սեփական» հիւլէական ինքնապաշտպանութիւնը, քաջ գիտնալով, Ա.Մ.Նահանգներու եւ Ս. Միութեան նման ոյժին հետ բաղդատած, նոյնիսկ ծիծաղելի է իր բռնած ընթացքը։

Սակայն, հին փառքերը մոռնալը քիչ մը դժուար բան է։

Այս նախաբանը օգտակար նկատեցինք ցոյց տալու համար որ համաշխարհային Բ. պատերազմէն ասդին, աշխարհակալներու նոր տէրութիւններ հրապարակ ելան, յանձին Ա.Մ. Նահանգներու եւ Ս. Միութեան։ Եալթայի ժողովի իբրեւ ուղղակի արդիւնք, որուն մասնակիցներէն էին Սթալին, Չրչիլ եւ Ռուզվելթ, մեր մոլորակը բաժնուեցաւ ազդեցութեան գօտիներու, որոնք այնպիսի բծախնդրութեամբ կը պաշտպանուին որ կարծես թէ աշխարհ պիտի փլի եթէ որեւէ ոտնձգութիւն կատարուի այդ գօտիներէն մէկուն կամ միւսին շրջագիծէն ներս։ Ուր որ ալ նայինք աշխարհի քարտեսին վրայ, սահմանները գծուած են, ազդեցութիւնները ճշդուած, եւ վա՜յ թէ մէկ ուրիշ տէրութիւն փորձէ իր ազդեցութիւնը տարածել «արգիլուած գօտիէն» ներս։ Լարուածութիւնը կրնայ այնքան մը լրջանալ որ պատերազմի խօսքը տեղի կուտայ։ Այսպէս եղաւ Պերլինի պարագային, այսպէս եղաւ Քուպայի պարագային ասկէ երկոտասնեակ տարիներ առաջ։ Այսպէս է այսօր Կեդրոնական Ամերիկա, Ասիա, Ափրիկէ կամ Միջին Արեւելք։

Ինչ՞ու այս նշմարը։ Նախագահ Ռեկընն, իր ՄԱԿի 40րդ տարեդարձի առթիւ ելոյթին մէջ, փոխանակ խօսելու զինաթափութեան եւ խաղաղութեան մասին, եւ կամ ՄԱԿը զօրացնելու միջոցներու մասին, յարմար նկատեց խօսիլ աշխարհի հինգ «զգայուն եւ լարուած» կէտերու մասին, եւ հրաւիրեց Ս. Միութիւնը անոնց շուրջ լուրջ բանակցութիւններ սկսելու, աշխարհի վրայ լարուածութիւնը թեթեւցընելու համար։ Այդ հինգ կէտերը որոնք կը գտնուին Ասիոյ, Ափրիկէի եւ Լատին Ամերիկայի մէջ, որոշապէս կ'իյնան երկու գերզօր տէրութեանց փոխադարձ ազդեցութեան գօտիներէն ներս, ուրեմն հասկնալի կը դառնայ թէ ինչ՞ու անոնցմէ մէկը կամ միւսը կը դժկամակի փոփոխութիւն մտցնելու իր վերաբերմունքին մէջ, փոփոխութիւն որ կրնայ ի վնաս իրեն դառնալ։ Այս պատճառաւ ալ, երկուքին աշխարհաքաղաքական մտածողութեան լոյսին տակ, դժուար թէ կարելի ըլլայ երկուքին համար գոհացուցիչ «լուծումներ» գտնել այդ կեդրոններուն վերաբերեալ։

Ներկայիս, աշխարհի բոլոր ժողովուրդներուն

Շար. էջ 10

ՌՈՒՏՈԼՖ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍԻ ՄԷՋ

«Էրեբունի» հրատարակչական կազմակերպութեամբ՝ Նոյեմբեր 12 - 16 Heritage Gallery-ի մէջ պիտի ցուցադրուին հայրենի գծագրիչ՝ Ռուտոլֆ Խաչատրեանի գործերը։

Ռուտոլֆ Խաչատրեան ծնած է 1937-ին Երեւանի մէջ. ան իր մանկական տարիքէն սկսած է նկարել եւ տասնըութ տարեկանէն ի վեր մասնակցած է բազմաթիւ ցուցահանդէսներու։

Խաչատրեանի գործերը ցուցադրուած են աշխարհի տարբեր երկիրներու մէջ եւ արժանացած՝ բազմաթիւ մրցանակներու։ Իր գործերը ներկայացուած են Գերմանիոյ, Ֆրանսայի, Չեխոսլավաքիայի, Պուլկարիոյ, Իտալիայի եւ Անգլիոյ մէջ։ 1960-ին Խաչատրեան ընտրուած է Ս.Ս.Հ.Մ.-ի Նկարիչներու Միութեան անդամ, 1969-ին ան շահած է առաջին մրցանակը Կոմիտասի հարիւրամեակին առթիւ կազմակերպուած նկարչական մրցանակին։

1971էն ի վեր Ռ. Խաչատրեան կը գործէ Մոսկուայի մէջ, տալով ցուցահանդէսներ Խորհրդային Միութեան տարբեր քաղաքներուն մէջ։

1984-ին Ռուտոլֆ Խաչատրեան արժանացած է Հայաստանի Ժողովրդական Նկարիչի պատուաւոր տիտղոսին։

Լոս Անճելէսէն առաջ՝ Հոկտեմբեր 17 - 20, 1985-ին, Խաչատրեանի գործերը ցուցադրուեցան Տիթրոյթի Ս. Յովհաննէս Նկեղեցւոյ Գեղարուեստական Յանձնախումբի կազմակերպած ցուցահանդէսին։

«ՆԱՅԻՐԻ» ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԻԼԻ ՆՈՐ ԿԱՅԱՆԸ

Խումբ մը մտաւորականներ գեղեցիկ գաղափարը յղացած են հիմնելու «ՆԱՅԻՐԻ» մշակութային հեռուստատեսիլի կայանը, ամէն շաբաթ օրերը, առաւօտեանժամը 11:00 - 11:30, հայկական հեռատեսիլի կայանի հաղորդումէն անմիջապէս յետոյ։

Մշակութային հեռատեսիլի կայանի մը ստեղծումը շատ կարեւոր դեռ մը կրնայ խաղալ ոչ միայն մտաւորական եւ մշակութասէր հասարակութեան համար այլ ընդհանրապէս հայ ժողովուրդի միւս խաւերը աւելի կը մօտեցնէ իր ազգային եւ մշակութային հարստութիւններուն։

Կը շնորհաւորենք «ՆԱՅԻՐԻ» մշակութային հեռուստատեսիլի կայանի անձնակազմը, կը ցանկանք կատարեալ յաջողութիւն եւ յարատեւում սոյն մշակութանուէր ծրագրին մէջ։ Սակայն պիտի չուզէինք բաւարարուիլ միայն սփիւռքաճայ մշակութային կեանքի գործունէութեան անդրադարձումով այլ հայրենիքի մէջ տեղի ունեցած մշակութային եւ գրական ձեռնարկներուն ալ տեղ տրուի «Նայիրի»ի ծրագիրներուն մէջ։

Այս ցուցահանդէսի ընթացքին վաճառուեցան 24 աշխատանքներ։

Մեր գեղարուեստական էջին մէջ կու տանք հարցազրոյց մը, որ հայրենի արուեստագէտին շնորհած է Տիթրոյթի «Հայկական Մշակութային Ժառանգութեան Զայնասփիւռին», որուն Վարիչ-Տնօրէնն է Պր. Ե. Ազատեան։

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԾԱԿԹ. ՄԻՈՒԹԵԱՆ ԵՒ Հ.Մ.Մ.Ի ՃԱՇԿԵՐՈՅԹ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ ԼՈՆՏՈՆԻ ՄԷՋ

1,250,000 ՏՈԼԱՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԱԾ Ի ՆՊԱՍՏ ԿԵԴՐՈՆԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ

Լոնտոնի Տորչեսթըր պանդոկի ճաշկերոյթ-պարահանդէսէն տեսարան մը։ փնկարին մէջ՝ ձախէն աջ՝ Ընկեր Վահրիճ փճէրէճեան, Տիար Սարգիս Սողանալեան, Ընկեր Արշակ Գալայճեան եւ Գերշ. Տ. Շահէ Արք. Աճէմեան։

1985 թուականն ընդհանրապէս պատմական իրադարձութիւններով լի տարեթիւ մը հանդիսացաւ Լոնտոնահայ գաղութին համար։ Արդարեւ Հոկտեմբեր 12-ին, 1985, գաղութին մէջ մեծ ժողովրդականութիւն վայելող նորահաստատ զոյգ կազմակերպութիւնները՝ Նոր Սերունդ Մշակութային Միութիւնն ու Հայ Մարմնամարզական Միութիւնը, միասնաբար եւ մեծ պատրաստութեամբ սարքեցին իրենց անդրանիկ ճաշկերոյթ-պարահանդէսը։

Լոնտոնի Տորչեսթըր պանդոկի սրահին մէջ հաւաքուած շուրջ 500 անդամներու համակիր-բարեկամներու եւ հրաւիրեալներու մէջ կը նշմարուէին բազմաթիւ անձնաւորութիւններ, ոմանք ծովեր եւ ովկիանոսներ կտրելով յատկապէս եկած էին քաջալերելու հայրենանուէր այս զոյգ կազմակերպութիւններու նախաձեռնութիւնը։

Սոյն ճաշկերոյթին ներկայ էին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Դիւանապետ Գերշ. Տ. Ներսէս Արք. Պոզապալեան, Լոնտոնի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Եղիշէ Արք. Կիզիրեան, Երուսաղէմի միաբաններէն